

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությանը հանդիսացող /գյուղ Ձիթհանքով/ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-072-0009-0005 կադաստրային ծածկագրով 0.39985 հեկտար մակերեսով հողամասի աճուրդով օտարման մասին

Աճուրդի կազմակերպիչը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար:

Աճուրդի անցկացման օրը՝ 2023 թ. նոյեմբերի 10-ին, ժամը՝ 12:00-ին:

Աճուրդի անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի վարչական շենք (հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մաղաթյան փողոց 1):

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ 2023 թ. նոյեմբերի 6-ին, ժամը՝ 18:00:

Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 50%:

Գնային առաջարկի նվազագույն չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%:

Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 10000 ՀՀ դրամ:

Աճուրդի անսկացման եղանակը՝ բաց հրապարակային սակարկությունների եղանակ:

Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավելի է:

Հողամասի տվյալները, օտարման մեկնարկային գինը՝

N	Հողամասի գտնվելու վայրը, հասցեն	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Օտարման նպատակը	Հողամասի կոմունալ ենթակառուցվածք ներքով ապահովվածությունը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային և արժեքը (ՀՀ դրամ)	Հողամասի աճուրդով վաճառքի գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%)	Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի գինը (ՀՀ դրամ)
1.	Մարզ Շիրակի, Անի համայնք գյուղ Ձիթհանքով, 1-ն փողոց, 3-րդ նրբանցք 2/2 հողամաս	08-072-0009-0005	20092023-08-0050	0.39985	Բնակավայրերի	Հասարարական կառուցապատման.	Բնակչության հանգստի կազմակերպման օբյեկտի կառուցում	Առկա է ներբնակավայրային ճանապարհ, գազատարերը, խմելու ջրատարը, էլ հաղորդման գծը անցնում են հողամասի հարևանությամբ::	Չկան	1420000	100.0	567 790